ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-Կ02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

ք. Երևան 25.03.2019թ.

ժամը 12-00-ին

Ս/թ Մարտի 25-ին տեղի ունեցավ < Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն> պետական ոչ առևտրային կազմակերպության գլխավոր տնօրենի 2019 թվականի Փետրվարի 28-ի թիվ 45 հրամանով ստեղծված գնահատող հանձնաժողովի նիստը

Մասնակցում էին

**Հանձնաժողովի նախագահ՝**

Գլխ. Տնօրենի տեղակալ վարչական աշխատանքների գծով Լ.Զաքարյան

**Անդամներ՝**

Իրավախորհրդատու Ա.Հայրապետյան

Շենքերի սպասարկման բաժնի պետ Ս.Հակոբյան

Շենքերի սպաս.բաժնի գլխավոր մասնագետ Ա.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար, գնումների պատասխանատու

Ֆինանսական բաժնի պետի տեղակալ Ա.Միրումյան

<u>ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-Կ02</u> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների հաստատման մասին

- Ա) ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-Կ02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 1-ին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչվել՝ «Ֆոտոն» ՍՊԸ-ն:
- Բ) Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի արձանագրության բնօրինակից, ինչպես նաև գրանցամատյանի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել է տեղեկագրում.
- Գ) Հանձնաժողովի քարտուղարի և գնահատող հանձնաժողովի՝ հայտերի բացման նիստին ներկա անդամների կողմից ստորագրված շահերի բախման բացակայության մասին հայտարարությունների բնօրինակներից արտատպված (սկանավորված) տարբերակները հրապարակել է տեղեկագրում:
- Դ) քանի որ 1ին տեղը գրաված մասնակիցը չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ, հետևաբար էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում չի ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ
- Ե) էլեկտրոնային փոստի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ծանուցվել են՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

**Ընդունել ի գիտություն**

**«Ֆոտոն» ՍՊԸ** 3 աշխատանքային օրվա ընթացքում (19.03.2019թ) էլեկտրոնային եղանակով ներկայացրել է հրավերով նախատեսված՝ առաջարկվող ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը որոնք համապատասխանում են հրավերով սահմանված անվանումներին և տեխնիկական բնութագրերին:

Որոշում 3

- 1. Քանի որ ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-Կ02 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչված **«Ֆոտոն» ՍՊԸ-ն** չի հանդիսանում ՀՀ ռեզիդենտ և սահմանված ժամկետում ներկայացրել է հայտով առաջարկված

...րանքի ամբողջական նկարագիրը, որը գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են ...ավարար, ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-402 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում ընտրված մասնակից ճանաչել **«Ֆոտոն» ՍՊԸ-ին:**

- 2. Հիմք ընդունելով Գնումների մասին ՀՀ Օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից 5օրացույցային օր :
- 3. Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակիցներին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը և պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջը:
- **4.** <Պետական գույքի գույքագրման և գնահատման գործակալություն> ՊՈԱԿ-ի կողմից գրասենյակային կահույքի ձեռք բերման նպատակով ՊԳ19-ԳՀԱՊՁԲ-402 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել gnumner.am կայքում:
- **Ընդունվել է որոշում 4 կողմ, 0 դեմ ձայներով:**

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները, ազգանունները և ստորագրությունները.

**Հանձնաժողովի նախագահ՝**
Գլխ. Տնօրենի տեղակալ վարչական
աշխատանքների գծով — Լ.Զաքարյան-----------------------------
**Անդամներ ՝**
Իրավախորհրդատու — Ա.Հայրապետյան----------------------
Շենքերի սպասարկման բաժնի պետ — Ս.Հակոբյան----------------------
Շենքերի սպաս.բաժնի գլխավոր մասնագետ — Ա.Հարությունյան --------------------
Հանձնաժողովի քարտուղար, գնումների պատասխանատու
Ֆինանսական բաժնի պետի տեղակալ — Ա.Միրումյան----------------------